

# ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀՐԱՀԱՆԳ


(Նախատեսված է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի համար, ներառում է նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի, հանձնաժողովի քարտուղարի կողմից քվեարկության օրը իրականացվելիք գործունեության նկարագրությունը:)

2023 թվականի ապրիլի 29-ի ընտրություններ



# Բովանդակություն

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները քվեարկության նախորդ օրը (28 ապրիլի, 2023 թվական)	3
Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի/նախագահի տեղակալի/հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները քվեարկության օրը (29 ապրիլի, 2023 թվական)	9
Քվեարկության օրը ժամը 06:45-ից 08:00-ն անցկացվելիք հիմնական ակտիվությունների ընդհանուր նկարագիրը	9
Ժամը 06:45-ից 08:00-ն անցկացվելիք հիմնական ակտիվությունների մանրամասն նկարագրությունը	11
Քվեարկության գործընթացի մեկնարկը (ժամը 08:00-ից)	23
Քվեարկության ընթացքում հանձնաժողովի անդամների կողմից գործառնությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը/հսկողությունը	23
Առանց ընտրողների ստուգման/ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի կիրառման քվեարկության գործընթացը	29
Շրջիկ քվեատուփով քվեարկության անցկացումը (ժամը 09:00-ից)	35
Ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 17:00-ին և 20:00-ին քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը/ընդհանուր թիվը որոշելը և տեղեկատվություն տրամադրելը վերադաս ընտրական հանձնաժողովին	37
Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկության ավարտը (մինչև ժամը 19:00) և շրջիկ քվեատուփը ընտրական տեղամաս վերադարձնելը (մինչև ժամը 20:00)	39
Ընտրատեղամասի փակելուց (ժամը 20:00-ից) մինչև քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմուժն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք հիմնական ակտիվությունների ընդհանուր նկարագիրը	41
Ժամը 20:00-ից մինչև քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմուժն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք հիմնական ակտիվությունների մանրամասն նկարագրությունը	43
Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումը	61
Ընտրական փաստաթղթերի և գույքի փոխանցումը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին	65



Տեղամասային ընտրական հանձնաժողովի/հանձնաժողովի նախագահի/ հանձնաժողովի քարտուղարի լիազորություններին և գործունեությանն առնչվող օրենսդրական կարգավորումներին ամբողջությամբ ծանոթանալու համար տե՛ս «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքը, ԿՀՀ-ի «Վրաստանի խորհրդարանի միջանկյալ ինքնակառավարվող համայնքների՝ Թերջոլայի և Ցագերիի մունիցիպալիտետների քաղաքապետերի արտահերթ, ինքնակառավարվող քաղաք Քութախիի և ինքնակառավարվող համայնքների՝ Թիանեթի, Ախալցխիեի, Գուրջաանիի, Տղիբուլիի մունիցիպալիտետների սակրեբուլոնների 2023 թվականի ապրիլի 29-ի միջանկյալ ընտրությունների որոշ ընտրական ընթացակարգեր էլեկտրոնային միջոցներով իրականացնելու համար տեղամասային հանձնաժողովի անդամների ուղեցույց հրահանգի հաստատման մասին» 2023 թվականի փետրվարի 27-ի № 28 որոշումը և ԿՀՀ-ի համապատասխան իրավական ակտեր:

## Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունները քվեարկության նախորդ օրը (29 ապրիլի, 2023 թվական)

### 1. Քվեարկության շենքի կազմակերպման հետ կապված լիազորություններ.

- պատասխանատու եք քվեարկության շենքի կազմակերպման համար, նկատի՝ ունեցեք.
  - պետք է տեղեր առանձնացվեն ընտրողների գրանցման համար և տեղադրվեն սեղաններ՝ գրանցում իրականացնող անձանց քանակին համապատասխան,
  - ընտրողների գրանցման սեղանի/սեղանների վրա պետք է տեղադրվեն ընտրողների ստուգման սարքեր (յուրաքանչյուր 700 ընտրողի համար առնվազն մեկ սարք): Եթե ընտրատեղամասում կա մեկից ավելի ընտրողների ստուգող սարք, ստուգող սարքերը իրար են միացվում (սինքրոնացվում են) առանց ինտերնետի,
  - քվեարկության շենքում յուրաքանչյուր 800 ընտրողի համար պետք է կազմակերպվի առնվազն մեկ քվեախցիկ, որտեղ պետք է լինի հատուկ նշիչ՝ քվեաթերթիկը լրացնելու համար (անհրաժեշտության դեպքում, պետք է նախատեսվի սահմանափակ հնարավորություն ունեցող ընտրողների համար հարմարեցված քվեախցիկ):

### Նկատի՝ ունեցեք

Գաղտնի քվեախցիկները պետք է կահավորվեն հետևյալ կերպ. քվեախցիկը մի կողմից պետք է մսա բաց (ընտրողի համար մուտքը), և բաց կողմը ուղղված լինի դեպի քվեարկության շենքի պատն այնպես, որ չխախտվի քվեարկության գաղտնիության սկզբունքը:

- Տեսանելի տեղում պետք է դրվի առնվազն երկու քվեատուփ, որոնց վրա քվեարկության օրը սահմանված կարգով տեղադրվում են ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքեր: Քվեատուփերին մոտ պետք է դրվի սեղան, որի վրա ընտրողը քվեարկելուց հետո կտեղադրի հատուկ շրջանակ-ծրարը:



- Պետք է առանձնացվի տեղ՝ լուսանկարահանման և տեսանկարահանման համար (նպատակահարմար է փակցվի մակագրություն՝ լուսանկարահանման և տեսանկարահանման տեղ):
- Քվեարկության շենքում տեսանելի տեղում պետք է փակցված լինեն.
  - ընտրողների միասնական ցուցակի հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակ),
  - ընտրողների հատուկ ցուցակի (այսպիսինի գոյության դեպքում) հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակ),
  - շրջիկ քվեատուփի ցուցակի (այսպիսինի գոյության դեպքում) հանրային տեղեկատվության համար հատկացված տարբերակը (պատի ցուցակ),
  - թեկնածուների ցուցակները,
  - ԿԸՀ-ի կողմից սահմանված, քվեաթերթիկի լրացման կարգը,
  - քաղվածք Վրաստանի «Վրաստանի ընտրական օրենսգիրք» օրգանական օրենքից, թե որ դեպքում է քվեաթերթիկն անվավեր,
  - քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրությունը,
  - եթե քվեաթերթիկի մեջ ներառված որևէ ընտրական սուբյեկտ այլևս չի մասնակցում ընտրություններին՝ քվեարկության շենքում և գաղտնի քվեախցերում հայտարարություն այդ մասին:
- 2. Ընտրական փաստաթղթերի/գույքի ընդունման հետ կապված լիազորությունները.
 

Հիշեցե՛ք. քվեարկությունը սկսվելուց ոչ ուշ, քան 12 ժամ առաջ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից պետք է ստանաք.

  - ընտրական հանձնաժողովի համար հատկացված ճշգրտված ցուցակների վերջնական տարբերակները (սեղանի տարբերակ լուսանկարներով),





- ☑ ընտրողների ստուգման սարքեր, որոնցում ներմուծված է համապատասխան ընտրական տեղամասի համար հատկացված ընտրողների ցուցակը (ցուցակ լուսանկարներով), ինչպես նաև ընտրողների հատուկ ցուցակը (այսպիսինի գոյության դեպքում),
- ☑ հիմնական քվեատուփի վրա տեղադրվելիք ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերը,
- ☑ 50-50 հատով փաթեթավորած քվեաթերթիկներ և քվեարկելու համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարներ,
- ☑ քվեարկության օրվա գործավարության մատյանը:



## Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի/ նախագահի տեղակալի/հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները քվեարկության օրը (29 ապրիլի, 2023 թվական)

Քվեարկության օրը ժամը 06:45-ից 08:00-ն իրականացվելիք ակտիվությունների  
ընդհանուր նկարագիրը

### Նկատի՝ ունեցեք.

Ընտրատեղամասը բացելուց մինչև քվեարկության մեկնարկը (ժամը 06:45-ից մինչև 08:00-ն) իրականացվելիք ընթացակարգերի կազմակերպված անցկացումը կապված է հետևյալ հիմնական ակտիվությունների իրականացման հետ.

- ✓ բացել ընտրատեղամասը և իրագեկել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- ✓ ստուգել հավատարմագրման վկայականները՝ ընտրատեղամասում գտնվելու իրավունք ունեցող անձանց տեղամաս ներս թողնելու համար, ապահովել գրառում գրանցամատյանում,
- ✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների միջև բաշխել գործառույթները,
- ✓ հայտարարել տվյալները (ստացված ընտրական քվեաթերթիկների, հատուկ շրջանակ-ծրարների և բոլոր տեսակի ցուցակներում գրանցված ընտրողների թիվը),
- ✓ ակտիվացնել ընտրողների ստուգման սարքը, ապահովել նախնական հաշվետվությունների և ընտրողների ցուցակների տպագրում,
- ✓ ակտիվացնել ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքը և ապահովել գրոյական քաղվածքը տպելը,
- ✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին փոխանցել անհրաժեշտ նյութերն ու պարագաները՝ իրենց գործառույթին համապատասխան:

Ժամը 06:45-ից մինչև 08:00-ն իրականացվելիք ընթացակարգերի համար, ինչպես նաև քվեարկության ընթացքում (ժամը 08:00-ից մինչև 20:00-ն) առաջնորդվել ք ստորև տրված մանրամասն նկարագրությամբ:



## Ժամը 06:45-ից մինչև 08:00-ն իրականացվելիք ընթացակարգերի մանրամասն նկարագրություն

- Ժամը 06:45-ին բացե՛ք ընտրական տեղամասը, հեռախոսով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին տեղեկացրե՛ք ընտրական տեղամասը բացելու և հանձնաժողովի անդամների քվորումի (9 անդամ) մասին:

### Նկատի՛ ունեցեք.

Եթե այդ պահի դրությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների թիվը պակաս է իննից, տվյալ տեղեկությունն անհապաղորեն հաղորդվում է վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին, որն անհապաղորեն կայացնում է համապատասխան որոշում:

- **Հանձնաժողովի քարտուղարին** փոխանցե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանը, գրանցամատյանը, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը և ցուցադրական արձանագրությունը (փակցվում է տեսանելի տեղում):
- Ստուգե՛ք քվեարկության շենքում գտնվելու իրավասություն ունեցող անձանց հավատարմագրման վկայականները (ուժի մեջ է ինքնությունը հաստատող վկայականի հետ): Հիշե՛ք, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեն միայն Օրենքով սահմանված համապատասխան իրավագոր անձինք:
- Ի ցույց բոլորի, ստուգե՛ք այն փաթեթի ամբողջականությունը, որում զետեղված է հանձնաժողովի հատուկ կնիքը և բացե՛ք այն: **Հանձնաժողովի քարտուղարը** կնիքների համարները մուտքագրում է քվեարկության օրվա գործավարության մատյանում:
- Անցկացրե՛ք վիճակահանություն հանձնաժողովի անդամների միջև՝ գործառույթների բաշխման համար:



### Նկատի՝ ունեցեք.

Վիճակահանությանը չեն մասնակցում հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի նախագահի տեղակալը, հանձնաժողովի քարտուղարը: Հատուկ շրջանակ-ծրարների նպատակային օգտագործումը, քվեատուփի և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի հսկողությունն իրականացնում է տեղամասային ընտրական **հանձնաժողովի նախագահի տեղակալը** կամ, անհրաժեշտության դեպքում, նախագահի կամ նախագահի տեղակալի հանձնարարությամբ՝ հանձնաժողովի մեկ այլ անդամ:

**Առաջին հերթին** վիճակահանություն անցկացրե՛ք գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամներին որոշելու համար (առնվազն մեկ գրանցում իրականացնող յուրաքանչյուր 700 ընտրողի հաշվով): Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամին որոշելու համար անցկացվելիք վիճակահանությանը չեն մասնակցում կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի անդամները: **Հանձնաժողովի քարտուղարը** վիճակահանության արդյունքները մուտքագրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում:

### Ուշադրություն

Եթե վիճակահանությանը մասնակցող ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված **հանձնաժողովի անդամների թիվը համապատասխանում է** վիճակահանությամբ որոշվելիք ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամների թվին, վիճակահանություն չի անցկացվում, և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված հանձնաժողովի անդամներին ինքնաբերաբար շնորհվում է ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամի գործառույթ:

Եթե վիճակահանությանը մասնակցող ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված **հանձնաժողովի անդամների թիվը գերազանցում է** վիճակահանությամբ որոշվելիք ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամների թիվը, այդ դեպքում ընտրողների գրանցում իրականացնողները որոշվում են վիճակահանությամբ:





Եթե վիճակահանությանը մասնակցող ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված հանձնաժողովի անդամների թիվը վիճակահանությամբ որոշվելիք ընտրողների գրանցում իրականացնող **հանձնաժողովի անդամների թվից պակաս է**, այդ դեպքում վիճակահանություն չի անցկացվում, և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամի գործառույթի իրականացումը հանձնարարում է տեղամասային ընտրական հանձնաժողովի այլ անդամ/անդամների:

- Ցուցում տվեք **հանձնաժողովի քարտուղարին** մինչև քվեարկության օրը վիճակահանությամբ որոշված շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամների և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված հատուկ խմբի (այսպիսին առկայության դեպքում) անդամների տվյալները մուտքագրել քվեարկության օրվա գործավարության մատյանում: Հանձնաժողովի քարտուղարը պետք է առաջնորդվի տվյալ գործառույթը վիճակահանությամբ բաշխելու արդյունքներն արտացոլող ակտով:

### **Նկատի՛ ունեցեք.**

Եթե վիճակահանությամբ որոշված շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը կամ հատուկ խմբի անդամը հրաժարվում է իրեն շնորհված գործառույթի իրականացումից, շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամի գործառույթի կատարումը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնարարում է հանձնաժողովի այլ անդամի:

Ինչպես նաև, վիճակահանությամբ որոշված շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամը, որը հրաժարվում է իրեն շնորհված գործառույթի իրականացումից, կորցնում է հանձնաժողովի անդամների այլ գործառույթների բաշխման համար անցկացվելիք հերթական վիճակահանությանը մասնակցելու իրավունքը: Նրան գործառույթի շնորհման հարցը վճռե՛ք էլնելով անհրաժեշտությունից:

- Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամներից որոշելուց հետո անցկացրե՛ք հերթական վիճակահանությունը, որով կընտրվի քվեարկության սենյակում ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամը: **Հանձնաժողովի քարտուղարը** վիճակահանության արդյունքները մուտքագրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում:



### Նկատի՛ ունեցեք.

Եթե հանձնաժողովի որևէ անդամ հանձնաժողով է ներկայացել վիճակահանության ընթացակարգն ավարտվելուց հետո, նրան գործառույթի շնորհման հարցը վճռե՛ք ելնելով անհրաժեշտությունից:

- Հայտարարե՛ք ընտրողների թիվը ընտրողների միասնական ցուցակում, ընտրողների հատուկ ցուցակում և շրջիկ քվեատուփի ցուցակում (այսպիսինի գոյության դեպքում): **Հանձնաժողովի քարտուղարը** տվյալները մուտքագրում է քվեարկության օրվա գործավարության մատյանում և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ (ցուցադրական արձանագրության և քվեարկության օրվա գործավարության մատյանում հատուկ ցուցակի մեջ ընտրողների թիվը գրանցվում է քվեարկությունն ավարտվելուց հետո):
- Հայտարարե՛ք ստացած քվեաթերթիկների և քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարների քանակությունները: **Հանձնաժողովի քարտուղարը** ստացած քվեաթերթիկների թիվը գրանցում է ցուցադրական արձանագրության մեջ և քվեարկության օրվա գործավարության մատյանում:
- Մինչև ընտրողների ստուգման սարքերի ակտիվացումը ստուգե՛ք, թե հնարավոր է արդյոք այս սարքերն ակտիվացնել առանց հատուկ անհատական կողի/գաղտնաբառի մուտքագրման:

### Նկատի՛ ունեցեք.

Ընտրողներին ստուգող սարքերը հնարավոր է ակտիվացնել և այս սարքերից մեկնարկային հաշվետվությունները տպել միայն տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից նշված սարքերում հատուկ անհատական կողը/գաղտնաբառը մուտքագրելուց հետո:

- Ընտրողներին ստուգող սարքերի մեջ ակտիվացրե՛ք ընտրողների ստուգման գործընթացը և յուրաքանչյուր սարքից տպե՛ք մեկնարկային հաշվետվությունը: Տպված մեկնարկային հաշվետվությունները պահելու համար փոխանցե՛ք **հանձնաժողովի քարտուղարին**:



**Հանձնաժողովի նախագահի տեղակալը** էլեկտրոնային միջոցներով անցկացված քվեարկության առաջին հաստատման ձևաթղթում N1, N2 և N3 սյունակների երկայնքով կատարում է համապատասխան նշումներ (առաջին հաստատման ձևը հաստատված է ԿԸՀ-ի 2023 թվականի փետրվարի 20-ի 32/2023 որոշմամբ):

- Ընտրողների ստուգման սարքերում ստուգման գործընթացն ակտիվացնելուց հետո ընտրողների **գրանցում իրականացնողներից որևէ մեկին** ցուցնում տվեք, որ նա իրեն փոխանցված ստուգման սարքից տալի ընտրողների ցուցակը: Տպած ցուցակը ցուցադրական արձանագրության հետ փակցրե՛ք երևացող տեղում:

**Հանձնաժողովի նախագահի տեղակալը** էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ անցկացված քվեարկության առաջին հաստատման ձևաթղթի մեջ N4 սյունակի երկայնքով անում է համապատասխան նշումը:

- Ստուգե՛ք, որ քվեատուփերը դատարկ լինեն: Անհատական համար ունեցող կապարակնիքներով կապարակնե՛ք հիմնական քվեատուփերը և շրջիկ քվեատուփը (այսպիսինի գոյության դեպքում): Հիմնական քվեատուփի վրա տեղադրե՛ք ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերը: **Հանձնաժողովի քարտուղարը** քվեատուփի կնիքի համարները և կապարակնքման ժամանակը գրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում:

**Հանձնաժողովի նախագահի տեղակալը** էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ անցկացված քվեարկության առաջին հաստատման ձևաթղթի մեջ N5 սյունակի երկայնքով անում է համապատասխան նշումը:

- Քվեատուփերը կապարակնեքելուց հետո ձայները հաշվելու յուրաքանչյուր հատուկ էլեկտրոնային սարքից տպե՛ք նրա հաստատումը («գրոյական քաղվածք»), որ այդ պահի դրությամբ ոչ մի ընտրող չի քվեարկել սարքի միջոցով, և տպած տարբերակը փոխանցեք **հանձնաժողովի քարտուղարին** պահելու համար:

**Հանձնաժողովի նախագահի տեղակալը** էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ անցկացված քվեարկության առաջին հաստատման ձևաթղթի մեջ N6 սյունակի երկայնքով անում է համապատասխան նշումը:

- **Հանձնաժողովի քարտուղարի հետ** քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում ստորագրությամբ հաստատե՛ք դատարկ քվեատուփերի կապարակնքման և քաղվածքում տրված տեղեկությունն



այն մասին, որ այդ պահի դրությամբ ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի միջոցով ոչ մի ընտրող չի քվեարկել:

Այն նպատակով, որպեսզի ստուգեք, որ ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքը չի ընդունում քվեաթերթիկն առանց հատուկ շտրիխ-կոդի և անհատական QR կոդի, տվյալ սարքերի մեջ ներմուծե՛ք առանց հատուկ շտրիխ-կոդի և անհատական QR կոդի քվեաթերթիկի ֆորմատի թուղթ:

**Հանձնաժողովի նախագահի տեղակալը** էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ անցկացված քվեարկության աուդիտի հաստատման ձևաթղթի մեջ N7 սյունակի երկայնքով անում է համապատասխան նշումը:

- Յուրաքանչյուր ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամի փոխանցե՛ք.
  - 50 հատ քվեաթերթիկ,
  - քվեաթերթիկը լրացնելու հատուկ նշիչ (ընտրողին քվեաթերթիկի լրացման կարգը բացատրելու գործընթացում քվեաթերթիկի վրա ընտրողի կողմից փորձնական շրջանը գունավորելու նպատակով),
  - քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարներ,
  - նշմարման հեղուկ,
  - գրիչներ (ընտրողի ստուգման սարքից տպած ընտրողի ստուգումը հավաստող կտրոնի վրա ընտրողի կողմից ստորագրությունը արձանագրելու նպատակով),
  - ընտրողների ստուգման սարքից տպված՝ ընտրողների ստուգումը հաստատող կտրոնների զետեղման համար հատկացված անթափանց տուփ/տուփեր (մինչև փոխանցումը հանձնաժողովի նախագահը անհատական համար ունեցող կապարակնիքով կապարակնքում է տվյալ տուփը):

**Հանձնաժողովի քարտուղարը** քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում մուտքագրում է ընտրողների ստուգման սարքից տպած ընտրողների ստուգումը հաստատող կտրոնների տեղադրման համար հատկացված կապարակնքված տուփերի կապարակնիքների անհատական համարները, այն գրանցում իրականացնողների անունը, ազգանունը, որոնց փոխանցվել են տվյալ տուփերը: Տուփը ստանալը համապատասխան **գրանցում իրականացնողը հաստատում է ստորագրությամբ:**





### Նկատի՝ ունեցեք.

- ✓ Գրանցում իրականացնողները պետք է ստուգեն քվեաթերթիկների քանակի ճշգրտությունը, որից հետո գրանցում իրականացնողների հետ պետք է ստորագրեք քվեաթերթիկների ընդունման-հանձնման ակտը:
- ✓ Գրանցում իրականացնողներից մեկի սեղանին տեսողության խնդիրներ ունեցող ընտրողների համար տեղադրե՛ք խոշորացնող ոսպնյակ, ինչպես նաև՝ հատուկ շրջանակ տեսողությունից զուրկ ընտրողների համար (եթե այդպիսիք կան):

- Ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին փոխանցե՛ք նշմարումը ստուգող ուլտրամանուշակագույն լապտեր:
- Քվեատուփը և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքը վերահսկող տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալին/հանձնաժողովի մեկ այլ անդամի ցուցն՝ տվեք տեղ զբաղեցնել հիմնական քվեատուփի և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի մոտ

### Քվեարկության գործընթացը սկսելը (Ժամը 08:00-ից)

- Ընտրական տեղամասում քվեարկության գործընթացը սկսվում է ժամը 08:00-ից: Առաջին ընտրողի կողմից գրանցումն անցնելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին հեռախոսով տեղեկացրե՛ք քվեարկությունը սկսելու մասին:

### Քվեարկության ընթացքում հանձնաժողովի անդամների կողմից գործառնությունների իրականացման գործընթացի վերահսկողությունը/ հսկողությունը

Քվեարկության ընթացքում հանձնաժողովի անդամների կողմից գործառնությունների իրականացման գործընթացը վերահսկելու/հսկելու նպատակով, նկատի ունեցե՛ք.

- Ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը Վրաստանի քաղաքացու էլեկտրոնային անձը հաստատող փաստաթուղթը (ID քարտը) ներմուծում է ընտրողներին ստուգող սարքի ընթերցողի մեջ (քաղաքացու անձը հաստատող էլեկտրոնային վկայականի ընթերցման գոտի):



### Ուշադրություն

Եթե ընտրողը ընտրողների գրանցում իրականացնողին ներկայացնում է Վրաստանի քաղաքացու ոչ էլեկտրոնային անձը հաստատող վկայական կամ անձնագիր, գրանցում իրականացնողը ընտրողի տվյալները սարքի մեջ ձեռքով է որոնում:

- Եթե ստուգող սարքի կողմից ընտրողի տվյալների համապատասխանությունը ստուգելիս հաստատվի, որ ներկայացված փաստաթղթում տվյալ ընտրողի գրանցման տվյալները համապատասխանում են ընտրողների ստուգման սարքի մեջ ներմուծված ընտրողների ցուցակում առկա տվյալներին, սակայն ընտրողների գրանցում իրականացնողն այս ընտրողի դեմքը և ներկայացված փաստաթղթի լուսանկարը միմյանց անհամապատասխան է համարում, տվյալ անհամապատասխանության հարցով նա պետք է դիմի ձեզ:

### Ուշադրություն

Եթե հաստատեք անհամապատասխանությունը, ապա ցուցում տվեք **հանձնաժողովի քարտուղարին** քվեարկության օրվա գործավարության մատյանում դրա համար հատկացված էջում անել գրառում (նշելով ընտրողի անունը, ազգանունը և ընտրողների ցուցակում նրա հերթական համարը): Այս գրառումը **հանձնաժողովի քարտուղարի հետ** հաստատե՛ք ստորագրություններով:

Եթե չհաստատեք անհամապատասխանությունը, ընտրողների գրանցումն իրականացնողն իրավունք ունի քվեարկության օրվա գործավարության մատյանում դրա համար հատկացված էջում գրել իր առանձնահատուկ կարծիքը: **Հանձնաժողովի քարտուղարը** քվեարկության օրվա գործավարության մատյանում պետք է անի համապատասխան գրառում (նշելով ընտրողի անունը, ազգանունը և ընտրողների ցուցակում նրա հերթական համարը): Այս գրառումը **գրանցում իրականացնողը** և հանձնաժողովի քարտուղարը պետք է հաստատեն ստորագրություններով:

Վերոնշյալ դեպքերում **հանձնաժողովի քարտուղարը** քվեարկության օրվա գործավարության մատյանին պետք է կցի իր ստորագրությամբ հաստատված ընտրողի կողմից ներկայացված անձը հաստատող փաստաթղթի ֆոտոպատճենը:

Ընթացակարգերը կատարելուց հետո **ընտրողին տվե՛ք քվեարկությանը մասնակցելու իրավունք:**



- Եթե ստուգող սարքը հայտնաբերում է, որ քվեարկության շենք քվեարկելու եկած ընտրողը ներառված է շրջիկ քվեատուփի ցուցակում կամ այլ տեղամասի համար հատկացված հատուկ ցուցակում, նրան կարգելվի ընտրական տեղամասում մասնակցել քվեարկությանը:
- Եթե ստուգող սարքը հայտնաբերի, որ ընտրատեղամաս քվեարկելու եկած ընտրողն արդեն մասնակցել է քվեարկությանը, նրան կարգելվի մասնակցել քվեարկությանը:
- Եթե ստուգող սարքը հաստատում է ընտրողի տվյալների համապատասխանությունը, ապա ընտրողների գրանցում իրականացնողը ստուգող սարքից տպում է ընտրողի ստուգումը հաստատող կտրոնը, որը ստորագրում է ընտրողը: Տվյալ կտրոնը գրանցում իրականացնողը զետեղում է գրանցման սեղանի վրա տեղադրված անթափանց կապարակնքված տուփի մեջ:

### **Ուշադրություն.**

Եթե ընտրողի ստուգման սարքից չի տպվի ընտրողի ստուգումը հաստատող կտրոն կամ կտպվի տեխնիկական խտտանով կտրոն, այս դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը գրանցամատյանին կցում է տվյալ ընտրողի անձը հաստատող փաստաթղթի ֆոտոպատճենը: Ընտրողը ստուգումը հաստատող կտրոնի փոխարեն ստորագրում է համապատասխան ակտը, որն ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը տեղադրում է ընտրողի ստուգումը հաստատող կտրոնների համար հատկացված տուփի մեջ:

- Եթե ընտրողը կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը փաստել է քվեաթերթիկը կամ քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարը, ընտրողների գրանցում իրականացնողին ցուցում տվեք, որ փոխի ընտրողի փաստված քվեաթերթիկը/հատուկ շրջանակ-ծրարը նորով: Ընտրողի ներկայությամբ կտրե՛ք փաստված քվեաթերթիկի ծրարի անկյունը, վրան գրե՛ք «Փաստված է» և ստորագրե՛ք ու առանձին պահեք:
- Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, ուշադրություն դարձրեք, որ օգնելու համար քվեախցիկ չհրավիրի ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների



ներկայացուցչի և դիտորդի: Ընտրողին կարող է օգնություն ցուցաբերել ցանկացած անձ, բացի վերոնշյալ անձանցից:

- Եթե քվեարկության շենք է ներկայացել ֆիզիկական վիճակ ունեցող ընտրող (վերին վերջավորություններ չունենալ), այս դեպքում հիշեցրե՛ք հոսքը կարգավորողին, որ նման ընտրողը չի անցնում նշմարումը ստուգելու ընթացակարգ, ինչպես նաև հիշեցրե՛ք ընտրողների գրանցում իրականացնողին, որ այսպիսի ընտրողը չի անցնում նշմարում:
- Եթե ընտրողը ֆիզիկական վիճակի պատճառով (վերին վերջավորություններ չունենալ) չի կարող քվեարկության ընթացակարգն ինքնուրույն կատարել, այս դեպքում հիշեցրե՛ք ընտրողների գրանցում իրականացնողին, որ ընտրողին քվեաթերթիկ փոխանցելիս ընտրողի ստուգումը հաստատող կտրոնի վրա «ընտրողի ստորագրության» փոխարեն անի գրառում «ֆիզիկական վիճակ» և տվյալ գրառումը հաստատի ստորագրությամբ:
- Ուշադրություն դարձրեք, որ **քվեարկության համար նախատեսված հատուկ շրջանակ-ծրարի նպատակային օգտագործման համար պատասխանատու հանձնաժողովի անդամ** ընտրողի օգտագործած հատուկ շրջանակ-ծրարները ժամանակին փոխանցի գրանցում իրականացնողներին, որպեսզի չխափանվի քվեարկության գործընթացը:
- Եթե ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքը վերադարձնի քվեաթերթիկը, ապա այն կհամարվի Ֆասված, այն կպահվի առանձին և քվեարկության ավարտից հետո կավելացվի Ֆասված քվեաթերթիկների թվին: Գրանցում իրականացնողը պարտավոր է ընտրողի Ֆասված քվեաթերթիկը փոխարինել նոր քվեաթերթիկով:

### **Առանց ընտրողների ստուգման/ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերի օգտագործման քվեարկության գործընթաց**

Առանց ընտրողների ստուգման/ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերի օգտագործման քվեարկության գործընթացի ժամանակ նկատի՛ ունեցեք.

- Եթե տեխնիկական խոտանի պատճառով խափանվել է ընտրողների ստուգման/ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքով քվեարկության գործընթացը, որոշում եք կայացնում քվեարկության գործընթացի ժամանակավոր ընդհատման մասին: Տեղեկությունը անհապաղ հայտնում եք վերադաս ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովին:





### Նկատի՝ ունեցեք.

Այն դեպքում, երբ քվեարկության գործընթացն ընթանում էր ընտրողների ստուգման և ձայների հաշվման մեկից ավելի հատուկ էլեկտրոնային սարքի օգտագործմամբ, և տեխնիկական թերության պատճառով դադարել է աշխատել միայն դրանց մի մասը, քվեարկության գործընթացը կշարունակվի ընտրողների ստուգման և ձայների հաշվման մնացած գործող էլեկտրոնային սարքի/սարքերի օգտագործմամբ:

- Այն դեպքում, եթե անհնար լինի ընտրողների ստուգման սարքերով կամ ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերով շարունակել քվեարկությունը, հանձնաժողովը քվեարկությունն առանց համապատասխան սարքերի օգտագործման շարունակելու մասին ակտ է կազմում: **Հանձնաժողովի քարտուղարը** համապատասխան գրառում է անում քվեարկության օրվա գործավարության մատյանի 32-րդ էջում:

### Նկատի ունեցե՛ք

Քվեարկությունն առանց ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերի օգտագործման շարունակելու նպատակով քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ սարքերը հանե՛ք իրիմասկան քվեատուփերի վրայից, որոնք ունեն քվեաթերթիկները տեղադրելու համար հատուկ ճեղք (ընտրողը հնարավորություն ունի քվեաթերթիկը տեղադրել անմիջապես քվեատուփի մեջ):

Առանց ընտրողների ստուգման սարքերի օգտագործման քվեարկությունը շարունակելու դեպքում համապատասխան ընտրողների գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամներին փոխանցե՛ք ընտրական հանձնաժողովի համար հատկացված ընտրողների ցուցակները (սեղանի համար հատկացված ցուցակ լուսանկարներով), գրանցում իրականացնողներից մեկին փոխանցե՛ք նաև ընտրողների հատուկ ցուցակը (այդպիսինի առկայության դեպքում): Անհրաժեշտության դեպքում, ձեր հանձնարարությամբ ընտրական հանձնաժողովի անդամը/անդամները կատարում է/են ընտրողի գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամի գործառույթ: Գրանցում իրականացնողների սեղանի վրա պետք է փակցվի գրանցում իրականացնողների սեղանի վրա տեղադրված ցուցակներին համապատասխան ընտրողների ազգանունների այբբենական հաջորդականությունը և ընտրողների համարների հաջորդականությունը:



Ինչպես նաև՝ հոսքը կարգավորողին ցուցն՝ տվեք ընտրողին քվեարկության սենյակ ներս թողնի, եթե ընտրողի համար հատկացված գրանցման սեղանի մոտ չկա երկուսից ավելի ընտրող:

- Քվեարկությունն առանց ընտրողների ստուգման սարքերի օգտագործման շարունակելու դեպքում, ընտրողների **գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամը** ընտրողների գրանցումն իրականացնում է հետևյալ կարգի պահպանմամբ,
  - ✓ ընտրողին խնդրում է ներկայացնել Վրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը,
  - ✓ ստուգում է ներկայացված փաստաթղթում տեղ գտած և ընտրողների ցուցակում առկա լուսանկարի և ընտրողի դեմքի համապատասխանությունն իրար,
  - ✓ ստուգում է Վրաստանի քաղաքացու անձը հաստատող վկայականում կամ Վրաստանի քաղաքացու անձնագրում տվյալ ընտրողի գրանցման տվյալների համապատասխանությունն ընտրողների ցուցակում եղած տվյալներին,
  - ✓ ընտրողների ցուցակում ընտրողի մասին տվյալների համապատասխանությունը հաստատվելու դեպքում կատարում է նշմարում,
  - ✓ ստորագրում է ընտրողների փաստական ցուցակի համապատասխան այունակում և ընտրողին ցուցում տալիս քվեաթերթիկը ստանալը ընտրողների ցուցակում արձանագրել գրանցում իրականացնողի սեղանի վրա դրված գրչով, ինչից հետո ընտրողին փոխանցում է քվեաթերթիկը և քվեարկելու համար նախատեսված հատուկ շրջանակ-ծրարը:

### **Ուշադրություն.**

Եթե քվեարկության ընթացքում պարզվի, որ ընտրողը ընտրացուցակում ստորագրել է այլ ընտրողի ազգանվան դիմաց գտնվող այունակում, նման դեպքում ընտրողին, որի ազգանվան դիմաց արձանագրված է ստորագրությունը, պետք է ցուցում տրվի, որ ստորագրի նույն այունակում: Ինչպես նաև, ընտրողների գրանցումն իրականացնողը նշվածի



վերաբերյալ պետք է բացատրագիր գրի (ընտրողների միասնական ցուցակում ընտրողի համարի, անվան և ազգանվան մատնանշմամբ):

Եթե ընտրողը ֆիզիկական վիճակի պատճառով (վերին վերջույթներ չունենալ) չի կարող ինքնուրույն կատարել քվեարկության ընթացակարգերը, այս դեպքում հիշեցրե՛ք ընտրողների գրանցում իրականացնողին, որ ընտրողին քվեաթերթիկ տրամադրելիս ընտրողների միասնական ցուցակի «ընտրողի ստորագրություն» սյունակում կատարի «ֆիզիկական վիճակ» գրառումը և ստորագրությամբ վավերացնի այդ գրառումը:

### Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկության ընթացակարգի անցկացումը (Ժամը 09:00-ից)

- Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկությունը սկսվում է ժամը 09:00-ից: Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկության համար պատասխանատու հանձնաժողովի անդամներին/հատուկ խմբի անդամներին փոխանցե՛ք.
  - ✓ կնքված շրջիկ քվեատուփը,
  - ✓ շրջիկ քվեատուփի ցուցակը,
  - ✓ անհրաժեշտ քանակով քվեաթերթիկներ,
  - ✓ քվեաթերթիկը լրացնելու հատուկ նշիչներ (մարկերներ),
  - ✓ քվեարկելու համար նախատեսված հատուկ շրջանակ-ծրարներ (շրջիկ քվեատուփի ցուցակում առկա ընտրողների քանակին համապատասխան),
  - ✓ գրիչներ (շրջիկ քվեատուփի ցուցակում ընտրողի կողմից ստորագրություն արձանագրելու նպատակով),
  - ✓ մետաղյա ամրակներ (մետաղյա ամրակով ամրացվում է հատուկ շրջանակ-ծրարը, նրանում ընտրողի կողմից քվեաթերթիկը գետեղելուց հետո, նման կերպ հատուկ շրջանակ-ծրարը տեղադրվում է շրջիկ քվեատուփի մեջ),
  - ✓ նշմարումը ստուգելու ու լտրամանուշակագույն լապտեր,
  - ✓ նշմարման հեղուկ,
  - ✓ շրջիկ քվեատուփի ճեղքի կապարակնիք (շրջիկ քվեատուփի ճեղքը կապարակնքվում է շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկությունն ավարտվելուց հետո):



**Հանձնաժողովի քարտուղարը** քվեարկության օրվա գործավարության մատյանի 4-րդ էջում գրանցում է շրջիկ քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամներին/հատուկ խմբի անդամներին փոխանցված քվեաթերթիկների և քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարների քանակը, ինչպես նաև շրջիկ քվեատուփը ընտրատեղամասից տանելու ժամանակը:

**Ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 17:00-ին և 20:00-ին քվեարկությանը մասնակցած ընտրողների քանակի/ ընդհանուր քանակի որոշումը և տեղեկության տրամադրումը վերադաս ընտրական հանձնաժողովին**

Քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը և քվեարկությանը մասնակից ընտրողների ընդհանուր թիվը պարզելու նպատակով **գրանցում իրականացնողներից մեկին** ցուցում տվեք իրեն փոխանցված ընտրողների ստուգման սարքից ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 17:00-ին և 20:00-ին տպել հաշվետվություն:

**Հանձնաժողովի նախագահի տեղակալը** էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ անցկացված քվեարկության աուդիտի հաստատման ձևաթղթի մեջ N8, N9, N10, N11 և N12 պունակների երկայնքով անում է համապատասխան նշումը:

**Նկատի՛ ունեցեք.**

Համապատասխան ժամանակահատվածի համար քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը և քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը որոշելու նպատակով տպված հաշվետվության մեջ նշված քվեարկությանը մասնակցած ընտրողների թվին գումարվում է շրջիկ քվեատուփի ցուցակում (այսպիսինի առկայության դեպքում) ստորագրությունների գումարը:

Եթե ընտրատեղամասում քվեարկության գործընթացը շարունակվել է առանց ընտրողների ստուգման սարքի, և եթե անհնար է որևէ ստուգման սարքից հաշվետվություն տպել, միանվագ բացե՛ք ստուգման սարքից տպած ընտրողների ստուգումը հաստատող կտրոնները զետեղելու համար հատկացված կապարակնքված անթափանց տուփերը, հաշվե՛ք նրանցում զետեղված ընտրողների ստուգումը հավաստող կտրոնների թիվը, ցուցում տվեք **հանձնաժողովի քարտուղարին** իր մոտ նշել տվյալ տվյալները: Դրանից հետո կտրոնները կրկին զետեղե՛ք տվյալ փաստաթղթերի համար հատկացված անթափանց տուփի/տուփերի մեջ և կապարակնքե՛ք դրանք: Հաջորդ փուլում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը և քվեարկությանը մասնակցած





ընտրողների ընդհանուր թիվը որոշե՛ք ըստ տեղամասային ընտրական հանձնաժողովների համար հատկացված ընտրողների ցուցակներում եղած ստորագրությունների:

Տեղամասային ընտրական **հանձնաժողովի քարտուղարը** քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ և քվեարկության օրվա գործավարության մատյանում ժամը 12:00-ի և 17:00-ի դրությամբ նշում է քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը: Ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 17:00-ին և 20:00-ին հաշված տվյալները տեղեկացվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

### **Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկության ավարտվելը (մինչև ժամը 19:00) և քվեատուփի վերադարձները ընտրական տեղամաս (մինչև ժամը 20:00)**

Շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկության ընթացակարգն ավարտվում է ոչ ուշ, քան մինչև ժամը 19:00-ն, շրջիկ քվեատուփը ընտրական տեղամաս պետք է վերադարձվի ոչ ուշ, քան ժամը 20-ին:

Շրջիկ քվեատուփը ընտրական տեղամաս վերադարձնելուն պես ցուցն՝ սովեք **հանձնաժողովի քարտուղարին** ստուգել շրջիկ քվեատուփի ցուցակում առկա ստորագրությունների, չօգտագործված կամ/և ժամանակ քվեաթերթիկների թվի ճշտությունը: Անճշտության հայտնաբերման դեպքում՝ շրջիկ քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամները/հատուկ խմբի անդամները պետք է բացատրագիր գրեն՝ պատճառի մատնանշմամբ: **Բացատրագրում արտացոլված տվյալները նախատեսե՛ք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը լրացնելիս:**

Կտրե՛ք չօգտագործված քվեաթերթիկների անկյունները, մակագրե՛ք «ժամանակ քվեատուփի» և ստորագրե՛ք: **Հանձնաժողովի քարտուղարը** ընտրողների ստորագրությունների թիվը շրջիկ քվեատուփի ցուցակում, չօգտագործված քվեաթերթիկների թիվը, ինչպես նաև ընտրական տեղամաս շրջիկ քվեատուփի վերադարձման ժամանակը գրանցում է գործավարության մատյանի 4-րդ էջում:

### **Ուշադրություն**

Եթե ընտրական տեղամասում օգտագործվել է մեկից ավելի շրջիկ քվեատուփ, հատուկ խմբի անդամներին ցուցն՝ սովեք քվեարկության շենքում ժամանակ մինչև շրջիկ քվեատուփի մեջ եղած քվեաթերթիկները ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի մեջ սահմանված կարգով ներմուծելու ընթացակարգի ավարտը:



Ընտրատեղամասը փակելուց (ժամը 20:00-ից) մինչև քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք հիմնական ակտիվությունների ընդհանուր նկարագիրը

### Նկատի՛ ունեցեք.

Ընտրատեղամասը փակելուց (ժամը 20:00-ից) մինչև քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումն իրականացվելիք ընթացակարգերի կազմակերպված անցկացումը կապված է հետևյալ հիմնական աշխատանքների իրականացման հետ.

- ✓ ընտրատեղամասը փակել,
- ✓ ավարտել ստուգման գործընթացը ստուգող սարքերում,
- ✓ բացել շրջիկ քվեատուփը և քվեաթերթիկները հիմնական քվեատուփում տեղադրել ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի միջոցով,
- ✓ ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքից նախնական արդյունքների մասին քաղվածք տպել և հրապարակել,
- ✓ ընտրատեղամասը կազմակերպել ձայները հաշվելու ընթացակարգի համար,
- ✓ վիճակահանությամբ որոշել հաշվողներին,
- ✓ ձայները հաշվելու գործընթացում ապահովել դիտորդներից որոշված հետևողների, ընտրական սուբյեկտների ներկայացուցիչների ներգրավվածություն,
- ✓ մինչև հաշվողների կողմից հիմնական քվեատուփերը բացելը կապարակնքել համապատասխան փաստաթղթերը,
- ✓ բացել հիմնական քվեատուփերը,
- ✓ հաշվողների կողմից հիմնական քվեատուփը բացելուց հետո քվեաթերթիկները տեսակավորել, հաշվել և կապարակնքել:

Ժամը 20:00-ից մինչև քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումը իրականացվելիք ընթացակարգերը կատարելու համար առաջնորդվե՛ք տրված մանրամասն նկարագրությամբ:



**Ժամը 20:00-ից մինչև քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն կազմելը ժամանակահատվածում իրականացվելիք հիմնական ակտիվությունների մանրամասն նկարագրություն**

- Ժամը 20:00-ին քվեարկությունն ավարտված հայտարարե՛ք: Հանձնարարե՛ք հանձնաժողովի անդամներից մեկին հաշվել հերթում կանգնած ընտրողների թիվը (այսպիսինի գոյության դեպքում): Հանձնաժողովի քարտուղարը նշված տվյալները մուտքագրում է քվեարկության օրվա գործավարության մատյանում: Քվեարկությունն ավարտվելուց հետո փակե՛ք ընտրատեղամասի դուռը:
- Ապահովե՛ք, որ բոլոր անձինք, բացառությամբ ձայները հաշվելիս քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց, լքեն քվեարկության շենքը: Հանձնարարե՛ք հանձնաժողովի քարտուղարին քվեարկության օրվա գործավարության մատյանի 26-րդ և 27-րդ էջերում նշել քվեները հաշվելու ժամանակ քվեարկության շենքում գտնվող անձանց տվյալները:

**Նկատի՛ ունեցեք.**  
Քվեարկության շենքը փակվելուց հետո քվեարկության շենք մտնելու և քվեարկության շենքը լքելու իրավունք ունեն քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք:

- Կապարակնքե՛ք ընտրողների ստուգումը հավաստող կտրոնները տեղադրելու համար նախատեսված անթափանց տուփերի ճեղքը:
- Քվեարկության գործընթացն ավարտվելուց հետո գրանցում իրականացնողներից որևէ մեկին հանձնարարե՛ք իրեն փոխանցված ստուգող սարքից տպել վերջնական հաշվետվությունը: Տպված վերջնական հաշվետվությունը փոխանցե՛ք հանձնաժողովի քարտուղարին պահելու համար:  
  
Հանձնաժողովի նախագահի տեղակալը էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ անցկացված քվեարկության աուդիտի հաստատման ձևաթղթի մեջ N12 սյունակի երկայնքով անում է համապատասխան նշումը:
- Ստուգման բոլոր սարքերում ավարտե՛ք ստուգման գործընթացը:



**Հանձնաժողովի նախագահի տեղակալը** էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ անցկացված քվեարկության աուդիտի հաստատման ձևաթղթի մեջ N13 սյունակի երկայնքով անում է համապատասխան նշումը:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի ձեռքի տակ եղած տեխնիկական միջոցներով ԿԸՀ-ին/ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին տեղեկացրե՛ք քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը, այդ թվում քվեարկությանը մասնակցած ընտրողների գենդերային տվյալները: Հանձնաժողովի անդամներից որևէ մեկին հանձնարարե՛ք լրացնել քվեարկության օրը սևու ընտրողների ընտրություններին մասնակցության վիճակագրական աղյուսակը: Վիճակագրությունը անհրաժեշտ է վարել սևու ընտրողի միայն վիզուալ գնահատմամբ:

**Ուշադրություն**

Քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը որոշելու նպատակով ստուգման սարքից տպված հաշվետվության մեջ նշված քվեարկությանը մասնակցած ընտրողների թվին գումարվում է շրջիկ քվեատուփի ցուցակում (այսպիսինի առկայության դեպքում) ստորագրությունների գումարը:

- Ստուգե՛ք շրջիկ քվեատուփի (այսպիսինի գոյության դեպքում) կապարակնիքի ամբողջականությունը:

**Ուշադրություն**

Եթե շրջիկ քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը խախտված լինի, բայց հանձնաժողովը համարի, որ դա չի առաջացրել օրենքի պահանջների խախտում, հանձնաժողովի կարգադրությամբ շարունակվում է քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգը (տվյալ փաստի վերաբերյալ անհապաղորեն տեղեկացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին): Հակառակ դեպքում, քվեատուփը կապարակնիքվում է և տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրության հետ միասին անհապաղորեն փոխանցվում վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:





- Եթե շրջիկ քվեատուփի կապարակնիքի ամբողջականության խախտում չի բացահայտվի, շրջիկ քվեատուփի մեջ եղած քվեաթերթիկները ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի միջոցով գետեղե՛ք հիփսական քվեատուփերից որևէ մեկի մեջ այնպես, որ անհնար լինի տեսնել ընտրողի կողմից կատարված ընտրությունը:

### Ուշադրություն

Քվեարկությունն առանց ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի օգտագործման անցկացնելու դեպքում շրջիկ քվեատուփի մեջ եղած քվեաթերթիկները հատուկ ճեղքի միջոցով գետեղե՛ք հիփսական քվեատուփերից մեկի մեջ այնպես, որ անհնար լինի տեսնել ընտրողի կողմից կատարված ընտրությունը և կապարակնիք՝ ք հիփսական քվեատուփի ճեղքը:

**Հանձնաժողովի նախագահի տեղակալը** էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ անցկացված քվեարկության ատոլիտի հաստատման ձևաթղթի մեջ N14 պլոնակի երկայնքով անում է համապատասխան նշումը:

### Նկատի՛ ունեցեք.

1. Եթե ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքը վերադարձնի շրջիկ քվեատուփից հանված քվեաթերթիկը, այսպիսի քվեաթերթիկը առանձին կորվի այնպես, որ անհնար լինի տեսնել ընտրողի կողմից արված ընտրությունը և այնուհետև կխառնվի հիփսական քվեատուփից հաշվելու նպատակներով հանված քվեաթերթիկներին:
2. Եթե շրջիկ քվեատուփից հանված հատուկ շրջանակ-ծրարում լինի սահմանված քանակից ավելի քվեաթերթիկ, առանձին կորվի (նման քվեաթերթիկների վրա կգրվի անվավերության հիմքը՝ «ավել քվեաթերթիկ») և կավելացվի հիփսական քվեատուփի մեջ հայտնաբերված անվավեր քվեաթերթիկների քանակություններին:
3. Եթե շրջիկ քվեատուփի մեջ հայտնաբերվի այլ ընտրական տեղամասի համար հատկացված կամ չսահմանված նմուշի քվեաթերթիկ, կորվի առանձին և կավելացվի հիփսական քվեատուփի մեջ հայտնաբերված (այսպիսինի առկայության դեպքում) համապատասխան քանակություններին:



Վերոհիշյալ առաջին և 2-րդ հանգամանքների առաջացման դեպքում **տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին** հանձնարարել՝ ք կազմել ակտ՝ փաստի մատնանշմամբ, որը ձեզ հետ միասին կստորագրեն հանձնաժողովի բոլոր անդամները, այդ թվում՝ շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամները/հատուկ խմբի անդամները: **Հանձնաժողովի քարտուղարը** տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմված ակտը պահում է քվեարկության օրվա գործավարության մատյանում:

- Շրջիկ քվեատուփում գտնվող քվեաթերթիկները հիմնական քվեատուփում զետեղելու գործընթացն ավարտելուց հետո, ձայների հաշվման որևէ հատուկ էլեկտրոնային սարքից տպել՝ ք նախնական արդյունքների մասին քաղվածք, որը **հանձնաժողովի քարտուղարի հետ** ստորագրել՝ ք և հաստատել՝ ք հանձնաժողովի կնիքով: Սարքից նախնական արդյունքների մասին քաղվածքը տպելուն պես ավարտել՝ ք սարքերի գործարկումը:

**Հանձնաժողովի նախագահի տեղակալը** էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ անցկացված քվեարկության աուդիտի հաստատման ձևաթղթի մեջ N15 պունակի երկայնքով անում է համապատասխան նշումը:

- Հանձնաժողովի քարտուղարին ցուցն՝ ավել ք հատուկ էլեկտրոնային սարքից տպած նախնական արդյունքների մասին քաղվածքը պահել քվեարկության օրվա գործավարության մատյանում:
- Ապահովել՝ ք հատուկ էլեկտրոնային սարքից տպած նախնական արդյունքների մասին քաղվածքը փակցնելը հանրային ծանոթացման համար և նախնական արդյունքների մասին քաղվածքում մատնանշված տվյալների մասին տեղեկությունները փոխանցել՝ ք ԿՀՀ-ին՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի ձեռքի տակ եղած տեխնիկական միջոցներով:

### **Նկատի ունեցե՛ք**

Հանրային իրազեկման նպատակով, նախնական արդյունքների քաղվածքի հետ, տեսանելի տեղում պետք է փակցնել հանձնաժողովի կողմից կազմված ակտի վավերացված պատճենը (այսպիսինի առկայության դեպքում), որը կազմվել է շրջիկ քվեատուփից քվեաթերթիկները հիմնական քվեատուփում զետեղելու գործընթացում բացահայտված հանգամանքների պատճառով (սարքը վերադարձրել



է շրջիկ քվեատուփից հանված քվեաթերթիկը, շրջիկ քվեատուփից հանված հատուկ շրջանակ-ծրարի մեջ հայտնաբերվել են սահմանված թվից ավելի քվեաթերթիկներ):

ԿԸՀ-ին իրազեկելու նպատակով հատուկ էլեկտրոնային սարքից տպված նախնական արդյունքների մասին քաղվածքում նշված տվյալների հետ ապահովե՛ք, որ վերը նշված ակտի ֆոտոպատճենն ուղարկվի տեղամասային ընտրական հանձնաժողով ձեռքի տակ եղած տեխնիկական միջոցներով:

- Ձայների հաշվման ընթացակարգը սկսելու համար հանձնաժողովի անդամների միջև անցկացրե՛ք վիճակահանություն՝ չորս հաշվող որոշելու համար: **Հանձնաժողովի քարտուղարը** վիճակահանության արդյունքները մուտքագրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում:
- Անցկացրե՛ք վիճակահանություն ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից ոչ ավելի, քան 2 ներկայացուցիչ որոշելու համար, որոնք հաշվողների հետ միասին մասնակցում են վավեր կամ/և անվավեր քվեաթերթիկները հաշվելու գործընթացին: **Հիշե՛ք**, վիճակահանությանը չեն մասնակցում այն ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները, որոնց կողմից նշանակված հանձնաժողովի անդամները հանդիսանում են վիճակահանությամբ որոշված հաշվողներ: **Հանձնաժողովի քարտուղարը** վիճակահանության արդյունքները մուտքագրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում:

### Ուշադրություն

Այն դեպքում, եթե քվեարկության օրը ընտրություններին մասնակցած ընտրական սուբյեկտների թիվը չի գերազանցում որոշվելիք ներկայացուցիչների թիվը, ընտրատեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներին ավտոմատ կերպով շնորհվում է լիազորություն հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ ընտրված հաշվողների հետ մասնակցել վավեր և/կամ անվավեր քվեաթերթիկների հաշվման գործընթացին: Բացի այդ, հաշվողներին որոշելու նպատակով իրականացվելիք վիճակահանությանը չեն



մասնակցի այն ընտրական սուբյեկտների կողմից նշանակված հանձնաժողովի անդամները, որոնց ներկայացուցիչներին ավտոմատ կերպով տրվել է վավեր և/կամ անվավեր քվեաթերթիկները հաշվելու գործընթացին մասնակցելու լիազորություն:

- Եթե դիտորդները չեն կարողանում իրենց կազմից փոխհամաձայնությամբ ընտրել քվեաթերթիկները հաշվելու գործընթացը վերահսկող երկու անձ, դիտորդների միջև անցկացրե՛ք վիճակահանություն 2 վերահսկող որոշելու համար: **Հանձնաժողովի քարտուղարը** համապատասխան արդյունքները մուտքագրում է քվեարկության օրվա գործավարության մատյանի 3-րդ էջում:
- Կազմակերպե՛ք ընտրատեղամասը ձայները հաշվելու ընթացակարգի համար: Հաշվողների սեղանի մոտ տարե՛ք.
  - ✓ ընտրողների ստուգման սարքից տպած վերջնական հաշվետվությունը,
  - ✓ շրջիկ քվեատուփի ցուցակը (այսպիսինի գոյության դեպքում),
  - ✓ չօգտագործված ընտրական քվեաթերթիկները,
  - ✓ ժնասված ընտրական քվեաթերթիկները,
  - ✓ հիմնական քվեատուփերը:

### Ուշադրություն

Ընտրատեղամասում, որտեղ քվեարկության գործընթացն ընթացել է առանց ընտրողների ստուգման սարքի, հանձնաժողովի նախագահը հաշվողների սեղանի մոտ պետք է տանի նաև հանձնաժողովի համար հատկացված միասնական ընտրացուցակները, ընտրողների հատուկ ցուցակը:

- Հաշվողներին ցուց՛ում տվեք հաշվել ստորագրությունների թիվը ընտրողների շրջիկ քվեատուփի ցուցակի մեջ (այսպիսինի գոյության դեպքում):

Տեղամասային ընտրական **հանձնաժողովի քարտուղարին** ցուց՛ում տվեք քվեարկությանը/ ընտրություններին մասնակցած ընտրողների վերջնական քանակն անհապաղորեն գրանցել քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրության մեջ և քվեարկության օրվա գործավարության մատյանում:





## Ուշադրություն

Քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների վերջնական թիվը որոշվում է ըստ ստուգման սարքից տպած վերջնական հաշվետվության տվյալների, ինչպես նաև, շրջիկ քվեատուփի ցուցակի հաշված ընտրողների ստորագրությունների քանակի՝ շրջիկ քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամների/հատուկ խմբի անդամների կողմից գրված բացատրագրերում արտացոլված տվյալների նախատեսմամբ (այսպիսինի գոյության դեպքում):

Եթե քվեարկության գործընթացն ընթացել է առանց ընտրողների ստուգման սարքի, հաշվողները քվեարկությանը մասնակցած ընտրողների վերջնական թիվը որոշելու նպատակով հաշվում են ընտրողների ստորագրությունների թիվը բոլոր տեսակի ցուցակներում: Ինչպես նաև, քվեարկության մասնակից ընտրողների վերջնական թիվը որոշելու նպատակով հաշվողները պետք է նկատի ունենան ընտրողների ստուգումը հավաստող կտրոնների թիվը և շրջիկ քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամների/հատուկ խմբի անդամների կողմից գրված բացատրագրերում արտացոլված տվյալները (եթե այդպիսիք կան):

- Ցուցում տվեք **հանձնաժողովի քարտուղարին** առանձին-առանձին փաթեթների մեջ զետեղել շրջիկ քվեատուփի ցուցակը (այսպիսինի գոյության դեպքում), չօգտագործված քվեաթերթիկները և զստված քվեաթերթիկները: **Հանձնաժողովի քարտուղարը** մինչև փաթեթի մեջ զետեղելը կտրում է չօգտագործված ընտրական քվեաթերթիկների անկյունները: Փաթեթի վրա նշվում է ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անվանումներն ու համարը, ընտրական փաստաթղթերի տեսակը: Փաթեթները կապարակնքվում են, կապարակնքման գծի վրա ստորագրեք **ք հաշվողների հետ**:

## Հիշե՛ք

Այն դեպքում, երբ քվեարկության գործընթացն անցկացվել է առանց ընտրողների ստուգման սարքի, առանձին-առանձին փաթեթների մեջ պետք է կապարակնքվեն ընտրողների միասնական ցուցակը, ընտրողների հատուկ ցուցակը (այսպիսինի գոյության դեպքում):

Հանձնաժողովի նախագահը պատասխանատու է ընտրական փաստաթղթերը սահմանված կարգի համաձայն կապարակնքելու համար:



- Ստուգե՛ք հիմնական քվեատուփերի կապարակնիքների ամբողջականությունը և, եթե ամեն ինչ կարգին լինի, բացե՛ք հիմնական քվեատուփերը:

### Ուշադրություն

Եթե քվեատուփերը ստուգելիս կապարակնիքի ամբողջականությունը խախտված լինի, բայց հանձնաժողովը համարի, որ դա չի առաջացրել օրենքի պահանջների խախտում, հանձնաժողովի կարգադրությամբ շարունակվում է քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգը (տվյալ փաստի վերաբերյալ անհապաղորեն տեղեկացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը): Հակառակ դեպքում, քվեատուփը կապարակնքվում է և տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրության հետ միասին անհապաղորեն փոխանցվում վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

- Ցուցո՛ւմ տվեք **հաշվողներին** իրար խառնել հիմնական քվեատուփից դատարկած քվեաթերթիկները և սկսել քվեաթերթիկները տեսակավորելու/հաշվելու գործընթացը, հետևյալ կարգի պահպանմամբ. առաջին հաշվողը վերցնում է քվեաթերթիկը և հայտարարում է՝ ում է տրված ձայնը, քվեաթերթիկն, ըստ ընտրական սուբյեկտի, փոխանցում է երկրորդ և երրորդ հաշվողներին, իսկ չորրորդ հաշվողին փոխանցում են անվավեր քվեաթերթիկները (այսպիսինի առկայության դեպքում):
- Քվեաթերթիկների տեսակավորումից հետո **հաշվողներին** ցուցո՛ւմ տվեք հաշվել անվավեր համարված քվեաթերթիկները, յուրաքանչյուր ընտրական սուբյեկտին տրված ձայները:
- Հայտարարե՛ք յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի ստացած ձայների քանակը և անվավեր քվեաթերթիկների քանակը: **Հանձնաժողովի քարտուղարի** հետ ստուգե՛ք տվյալների ճշգրտությունը:

### Ուշադրություն

Եթե քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվն ավել է ընտրական սուբյեկտների կողմից ստացած ձայների և անվավեր քվեաթերթիկների գումարից, ցուցո՛ւմ տվեք հաշվողներին կրկին հաշվել տվյալները:



- Քվեաթերթիկները հաշվելուց հետո, ցուցում տվեք հաշվողներին առանձին-առանձին փաթեթներով կապարակնքել անվավեր քվեաթերթիկները (դրանց վրա գրվում է՝ «Անվավեր է»), ընտրական սուբյեկտին պատկանող քվեաթերթիկների տրցակները:

Յուրաքանչյուր ընտրական սուբյեկտին պատկանող քվեաթերթիկների փաթեթի վրա պետք է գրեք ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անվանումը և համարը, սուբյեկտի տվյալները (անուն և ազգանուն) և քվեաթերթիկների քանակը:

Անվավեր քվեաթերթիկների փաթեթի վրա պետք է գրեք ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անվանումը և համարը, անվավեր քվեաթերթիկների թիվը:

Կապարակնքված փաթեթներ ստորագրե՛ք հաշվողների հետ:



## Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն կազմելը

### Նկատի՛ ունեցեք.

Ընտրական տեղամասի քվեարկության արդյունքները հաստատվում են միայն ըստ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի կազմված տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության:

**Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի նախագահի հետ համաձայնեցմամբ** լրացնում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը, որը կազմելիս պետք է նախատեսվեն հանձնաժողովի անդամների բացատրագրերում (այսպիսինի առկայության դեպքում) նշված տվյալները:

**Հանձնաժողովի բոլոր անդամները** պարտավոր են ստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը, ինչով հավաստվում է նրանց ներկա գտնվելը ընտրական տեղամասում: Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմված քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունն իրավաբանական ուժ ունի, եթե այն ստորագրել է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների մեծամասնությունը:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը պետք է վավերացվի հանձնաժողովի **հատուկ կնիքով**: **Հանձնաժողովի քարտուղարը** քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը գրանցում է գրանցամատյանում ելից փաստաթղթերի մասում:

Ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենը տեղամասային ընտրական հանձնաժողովի ձեռքի տակ եղած տեխնիկական միջոցներով **ուղարկվում է ԿԸՀ** :

**Արգելվում է** քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ տեղ գտած տվյալներն ուղղել:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն և ուղղման արձանագրություն կազմելու կարգը տեսե՛ք Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ուղեցույց հրահանգում. Մաս III, Գլուխ III, ենթագլուխ «Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումը»:





Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության և անճշտություններն ուղղելու արձանագրության (այսպիսինի առկայության դեպքում) ֆոտոպատճեններ տրամադրելիս (պահանջելու դեպքում)՝ **հանձնաժողովի քարտուղարի հետ** ստորագրե՛ք և վավերացրե՛ք հանձնաժողովի **հատուկ կնիքով**: Ֆոտոպատճենը ստացող անձը գործավարության մատյանում ստորագրությամբ հաստատում է դրա ստանալը:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության/անճշտություններն ուղղելու արձանագրության հետ կապված հանձնաժողովի անդամների բացատրագրերը (այսպիսինի գոյության դեպքում), պահանջի հիման վրա, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից հատկացվում են պահանջելուց հետո, 2-օրյա ժամկետում:

Բոլոր ընթացակարգերն ավարտելուց հետո **հանձնաժողովի քարտուղարի հետ** փակե՛ք գրանցամատյանը և գործավարության մատյանը, վավերացրե՛ք ստորագրություններով և տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքով:

Գրանցամատյանը և քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը **չեն կապարակնքվում**:



## Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին ընտրական պարագաների և ընտրական փաստաթղթերի փոխանցումը

- Կապարակնքե՛ք քվեարկության օրվա գործավարության մատյանը և դրա հետ մեկտեղ.
  - ✓ դիմումները/բողոքները (այսպիսինի գոյության դեպքում),
  - ✓ ընտրողների ստուգման սարքից/սարքերից տպված ընտրողների ստուգումը հավաստող հաշվետվությունը/հաշվետվությունները (մեկնարկային հաշվետվությունը, որով հաստատվում է, որ ընտրողների ստուգող սարքով ոչ մի ընտրողի ստուգում տեղի չի ունեցել և վերջնական հաշվետվությունը),
  - ✓ ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքից/սարքերից տպվածքները (հավաստումը, որ մինչև տուփերը կապարակնքելը ընտրողները չեն քվեարկել և նախնական արդյունքների մասին քաղվածք),
- կապարակնքե՛ք հանձնաժողովի հատուկ կնիքը (հանձնաժողովի հատուկ կնիքի կապարակնքված փաթեթի վրա ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները):

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը, անճշտություններն ուղղելու արձանագրությունը (այսպիսինի գոյության դեպքում), տարբերվող կարծիքն արտացոլող փաստաթուղթը (այսպիսինի գոյության դեպքում), գրանցամատյանը, քվեարկության օրվա գործավարության մատյանի կապարակնքված ծրարը և էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ անցկացված քվեարկության աուդիտը հավաստող ձևաթուղթը **փոխանցե՛ք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:**

**Հիշե՛ք,** քվեարկության գործընթացի ավարտից հետո կիրականացվի տեղամասային ընտրական հանձնաժողովից գույքի և համապատասխան այլ նյութերի փոխադրում պահեստ:

**Ուշադրություն դարձրեք,** որ փաթեթավորումը կատարվի ըստ ստուգողական ցուցակի: Դուք պատասխանատու եք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին փոխանցվելիք գույքի և փաստաթղթերի փաթեթավորման համար նախապես որոշված արկղերում/պարկերում դասավորելու գործընթացը պատշաճ կերպով կառավարելու համար:

**Նկատի՛ ունեցեք,** որ ընտրողների ստուգման սարքերը և ձայները հաշվելու էլեկտրոնային հատուկ սարքերը համապատասխան փաթեթավորման տուփերի մեջ դասավորելը ձեր հսկողության ներքո ապահովում է ընտրական տեղամասում գտնվող տեխնիկական անձը:





